



89. ԴԵ ՀՄԻ ԳՈՒ ՊԱՐ ԱՐԻ

Մի տղա մի պառավ մեր ա ունենում:

Օրերի մի օր սա փսակվում ա, կնգանը սուրմ ա.— Ա կնիկ, իմ մորը լավ մտիկ կանես, իրան ջահել կյանքը մաշել ա, ինձ էս տեսակ տղա յա դարձրել ու քեզ տվել:

էս տղեն օր օրի վրա տենում ա՝ մերը լղարում ա, շոփ ա դառնում: Մի օր էլ մորը հրցնում ա, ասում ա.— Այ մերա, էդ խի՞ ես տհե լղարում:

Ասում ա.— Ես ինչ գիտեմ, այ բալա, մենձացել եմ, հալբաթ մենձութենիցն ա:

Մի օր սա կնգանը ասում ա.— Հաց բան շինի, գնում եմ աշխատանքի:

Կնիկը հաց բանը շինում ա, ասում ա.— Գնա մառանիցը ցաքատն էլ բի, հետս տանիլ տեմ:

Կնիկը գնում ա մառանը թե չէ, սա հացը բանը եղ ա ունում ու մտնում թախտի տակին տապ անում:

Կնիկը գալիս ա տուն, տենում ա, մարթը գնացել ա, պառավն էլ գոմն ա սրբում:

Ճաշվա կողմը էս հարսը հաց բան ա սաքքում նստում, ուտում: Պառավը տուն ա գալի, վեր հաց ուտի, սա մի աման ցորեն ա տան մեչտեղը շաղ տալի ու փետը վերունում կեսորը փեթում, ասում ա.— Պար արի, պաղ արի, ա պառավ, ճաշդ հու շսառավ, եղով կուտես:

էս խեղճ պառավը համ պար ա գալի, համ էլ էգ ցորենը մին-
մին հվաքըմ, սա էլ մի ղուլից դրան ծեծըմ ա: Հլե հվաքըմ ա
պրծնըմ, ուղըմ ա գնա հաց ուտի, նորից ա ցորենը տան մեշին
շաղ տալի ու պառավին ծեծըմ.— Պար արի, պար արի, ա պա-
ռավ, ճաշդ հու շսառավ:

Սա թողըմ շի վեր էդ խեղճ կնիկը հաց ուտի:

էս տղեն էլ համփերըմ շի, դուա ա գալի, մի խան ցորեն ա
տանովը մին շաղ տալի ու մի կակալ ճիպոտ վերունըմ ընգնըմ
դրա ջանին:

Ասըմ ա.— Դե հմել դու պար արի, ես տեսնեմ:

Ասըմ ա ու տուր թե կտաս, սա ըղավըմ ա.— Վա՛յ մարդ ջան,
էլ անիլ շեմ, ղալաթ եմ արել, էլ անիլ շեմ, ցավդ տանեմ:

Դրան մլավ ջարդըմ փշրըմ ա ու գցըմ դուրս:

Ասըմ ա.— Դե գնա, քու սհենցն ու նհենցը:

